

համար Հապէշներու խնդիրը և վերահաստատելու Ս. Տեղեաց մէջ Հայերէ յափշտակուած իրաւունքները: Եղիազար հասնելով Երուսաղէմ՝ յաջողապէս գլուխ հանած էր ինչ որ կ'ակնկալուէր իրմէ ու իր գործերուն տեղեկազիրը ճամբայ հանած էր ձեռամբ Ստեփանոս միաբանին, որ Կ. Պոլիս կը հասնի 1657 Փետր. 23ին: Այդ տեղեկագրով Եղիազար կ'աւետէր թէ Պոյնուէյրի վէզիրին ձեռքով առնուած հրովարտակին համաձայն՝ յաջողած էր վերստին տիրանալ Ս. Ծննդեան մէկ դըրան, վերահաստատել Ս. Այրին վրայ պատարագելու Հայոց իրաւունքը ու 21 կանթեղ վառել հոն. տիրացած էր նոյնպէս Հապէշներու բոլոր տեղերուն ու կանթեղներուն: Ասոնց համար հարկ եղած էր մեծամեծ դատեր վարել Ղազէի և Երուսաղէմի փաշաներուն և Հիւսէմզատէ միւֆտիին ու ստուարախումբ ամբոխի մը առջև:

Այս յաջողութիւնը, սակայն, երկարատե պիտի չըլլար: Յոյներուն շատ ծանր եկած էր իրենց այս պարտութիւնը, ուստի նոր թափով սկսած էին գործի լծուիլ՝ նկուն ընելու համար Հայերը: Այս անգամ կ'աշխատէին ոչ միայն վերստանալ իրենց կորսնցուցածները, այլ և տիրանալ մեր Ս. Յակոբեանց վանքին, զօրաւոր պաշտպանութեամբը Քէօփրիւլի Մէհէմէտ փաշա մեծ եպարքոսին, որ յաջորդած էր Պոյնուէյրի վէզիրին, և որ հարուստ նուէրներով Յոյներէն շահուած ըլլալով՝ յայտնի համարձակ անոնց կողմը կը բռնէր ու եպարքոսական ատեանին առջև, դատավարութեանց ատեն, կ'արհամարհէր Հայերը:

Մեր ծրագիրէն դուրս է մանրամասնաբար նկարագրել թէ ինչպէս Յոյները կը յաջողին իրենց ձեռնարկներուն մէջ՝ տիրանալով մինչև իսկ Ս. Յակոբեանց վանքին, պատմել նաև այս առթիւ Եղիազարի Բերիա երթալը ու հոն Թէյարօղլու կուսակալէն վար